ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 214 – Ա **27 մայիսի 2020թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների հարակից տարածքներում կատարվող քաղաքաշինական գործունեության նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Մանուկյան Նարեկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի խորհրդական, հանձնաժողովի նախագահ
Հարությունյան Հակոբ	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր ճարտարագետ շինարար
Դավթյան Դավիթ	- մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Գասպարյան Սևակ	- մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ

2. Հանձնաժողովին՝ մշտադիտարկման արդյունքների մասին 15 օրյա պարբերականությամբ տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ